[266710]-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«10» նոյեմբերի 2017թ. N 136-Ա/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 82-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշումը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման կիրարկումն ապահովելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 82-Ա/1 հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N 3 հավելվածի՝

ա. «VII. Զբաղվածության ամենամյա պետական ծրագրերում ընդգրկված անձանց թվաքանակը» աղյուսակի 09-րդ տողի 1-ին սյունակում «(11+13)» թվերը փոխարինել «(10+12)» թվերով, 11-րդ տողը հանել, 15-րդ տողի 1-ին սյունակում «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝» բառերը փոխարինել «Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած» բառերով, 17-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին տող.

«

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15-րդ տողից՝ ազատազրկման ձևով պատիժը | 17.1 | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձինք | | | | | | | | |

»,

իսկ 18-րդ տողը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում | 18 | | | | | | | |

»,

բ. «VII.ե. Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի, որոնց ավարտից հետո որոշակի ժամանակահատվածում ակնկալվում է շահառուների աշխատանքի տեղավորում, ընթացիկ գնահատման չափանիշի հաշվարկման հիմնական ցուցանիշներ» աղյուսակի 02-րդ տողի 1-ին սյունակը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում (ուսուցումն ավարտած անձանց թիվը)», իսկ 02-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 02.1-ին տող.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում (ուսուցումն ավարտած անձանց թիվը) | 02.1 | | | | | | | |

».

2) հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված N 4 հավելվածի՝

ա. «IV. Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկված գործազուրկների թվաքանակը և ըստ ծրագրերի կայուն զբաղվածների թվաքանակը» աղյուսակի 21-րդ տողի 1-ին սյունակը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում», իսկ 24-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 24.1-ին, 24.2-րդ և 24.3-րդ տողեր.

«

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21-րդ տողից՝ ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձինք | 24.1 | | | | | | | | |
| Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում | 24.2 | | | | | | | | |
| նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձինք | 24.3 | | | | | | | | |

»,

բ. «IV.դ. _______ թ. ընթացքում իրականացված զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի կայուն զբաղվածության գործակիցների հաշվարկման հիմնական ցուցանիշներ» աղյուսակի 10-րդ տողի 1-ին սյունակում «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝» բառերը փոխարինել «Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած» բառերով, իսկ 10-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին տող.

«

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ | 10.1 | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում | | | | | | | | | |

».

3) հրամանի 1-ին կետի 8-րդ ենթակետով հաստատված N 8 հավելվածի «Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի՝ ըստ մարզերի բաշխման չափանիշների կշիռները» աղյուսակի 1-ին տողի 2-րդ սյունակում «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝» բառերը փոխարինել «Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած» բառերով և աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14-րդ տողով.

«

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14. | Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում | 0.2 | 0.05 | 0.1 | 0.15 | 0.2 | 0.175 | 0.025 | 0.1 |

».

4) հրամանի 1-ին կետի 9-րդ ենթակետով հաստատված N 9 հավելվածի 2-րդ, 4-րդ, 6-րդ, 9-րդ, 16-րդ, 18-րդ, 20-րդ, 23-րդ, 25-րդ, 29-րդ և 31-րդ ձևերի 4-րդ սյունակները, իսկ 21-րդ ձևի 3-րդ սյունակը հանել և հավելվածը լրացնել 34-րդ և 35-րդ ձևերով՝ համաձայն հավելվածի.

5) հրամանի 1-ին կետի 12-րդ ենթակետով հաստատված N 12 հավելվածի 12-րդ տողի 4-րդ սյունակում «0.1» թիվը փոխարինել «0.25» թվով:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2017թ. նոյեմբեր «10»-ի N 136-Ա/1 հրամանի

«Հավելված N 9
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2014թ. հուլիսի 3-ի N 82-Ա/1 հրամանի

**ՁԵՎ 34**

# ՀԱՅՏ – ՊԱՀԱՆՋԱԳԻՐ

## Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման ֆինանսավորման

20 թ.-------------------------------

<table>
<tr><th rowspan="3">Հ/Հ</th><th colspan="5">Գործատու</th><th colspan="3">Մասնագիտական ուսուցում անցնող անմրցունակ անձի</th><th colspan="6">Վճարման ենթակա գումարը (դրամ)</th></tr>
<tr><th rowspan="2">Անվանումը և ՀՎՀՀ-ն</th><th rowspan="2">Բանկի անվանումը, հաշվի համարը</th><th rowspan="2">Կնքված եռակողմ պայմանագրի համարը, օրը, ամիսը, տարին և ավարտը</th><th colspan="2">Գործատուի մոտ մասնագիտական ուսուցումը կազմակերպող՝ ուսուցանող մասնագետի</th><th rowspan="2">Անուն, ազգանուն, հայրանուն</th><th rowspan="2">Կրթաթոշակի չափը (դրամ)</th><th rowspan="2">Բանկի անվանումը, հաշվի համարը</th><th rowspan="2">Գործատուի մոտ մասնագիտական ուսուցումը կազմակերպող՝ ուսուցանող մասնագետին տրվող ամբողջ կամ ոչ լրիվ ամսվա համար հաշվարկված գումարի չափը*</th><th rowspan="2">Մասնագիտական ուսուցում անցնող անմրցունակ անձին ամբողջ կամ ոչ լրիվ ամսվա համար վճարվող կրթաթոշակի չափը</th><th rowspan="2">Մասնագիտական ուսուցում անցնող անմրցունակ անձին վճարվող կրթաթոշակից հաշվարկվող եկամտային հարկի չափը</th><th rowspan="2">Մասնագիտական ուսուցում անցնող անմրցունակ անձին փոխհատուցվող նպատակային սոցիալական վճարի չափը</th><th rowspan="2">Գործատուին տրվող միանվագ գումար նյութական ծախսերի համար</th><th rowspan="2">Ընդամենը (սյուն10+ սյուն11+ սյուն12+ սյուն13+ սյուն14)</th></tr>
<tr><th>Անուն, ազգանուն, հայրանուն</th><th>Նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի չափը (դրամ)</th></tr>
</table>

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | |

* Մասնագիտական ուսուցում կազմակերպող անձին տրվող գումարի չափը հաշվարկվում է հետևյալ կերպ. սյուն 6*20%, բայց ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձի չափը, իսկ անհատ ձեռնարկատերի դեպքում գումար՝ նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով:

Զբաղվածության պետական գործակալության ---------------------------------------------------- տարածքային կենտրոն
(տարածքային կենտրոնի անվանումը)

Կենտրոնի տնօրեն ------------------------------ -------------------------------------
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ. «____» «____________» 20 թ.

ՁԵՎ 35

## ՀԱՅՏ-ՊԱՀԱՆՋԱԳԻՐ

**Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման ֆինանսավորման**

Բյուջետային ծրագրերի գործառնական դասակարգման՝ բաժին----, խումբ----, դաս----, ծրագիր----

20 թ.---------------------------------

| Հ/Հ | Զբաղվածության տարածքային կենտրոնի անվանումը | Ծրագրում ընդգրկված անձանց թվաքանակը | Պահանջվող գումարի չափը (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |

Զբաղվածության պետական
գործակալության պետ՝ ________________ ________________________
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կատարող՝ ______________________
(անուն, ազգանուն)

Կ.Տ. «____» «____________» 20 թ. »: